# ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

## ՆՇԱՆԱԿՈՐ ՏԱՐԵԹՎԵՐ

Մեր Հայրենիքում և նրա սահմաններից դուրս լայնորեն նշվեց ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի մարտական օրգան «Պրավդա» թերթի 50-ամյակը: «Պրավդայի» ստեղծումը Վ. Ի. Լենինը համարում էր Ռուսաստանի պրոլետարիատի գիտակցականության, եռանդի ու համախմբվածության ակնառու ապացույց: «Պետերբուրգի բանվորները,— գրում էր նա,— ստեղծելով «Պրավդա» օրաթերթը, խոշոր, առանց չափազանցության կարելի է ասել՝ պատմական գործ կատարեցին»:

Շարունակելով և խորացնելով լենինյան «Իսկրայի» տրադիցիաները, «Պրավդան», որի առաջին համարը լույս տեսավ 1912 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին), հսկայական դեր խաղաց սոցիալիստական նոր վերելքի ժամանակաշրջանում: Նրա էջերում լայնորեն լուսաբանվում էին բանվորական շարժման ամենահրատապ հարցերը, պրոլետարիատի կյանքն ու կենցաղը, խոհերն ու ձգտումները, գործադուլային պայքարը ձեռնարկատերերի դեմ: Հետաքրքիր է նշել, որ իր գոյության առաջին շրջանում՝ 1912—1914 թթ. «Պրավդան» տպագրեց ավելի քան 17 հազար բանվորական թղթակցություն: Պետական Դումայի բոլշևիկյան ֆրակցիայի հետ միասին, «Պրավդան» այն համառուսաստանյան լեզալ տրիբունան էր, որը դարձավ բանվորական մասսաների սոցիալիստական դաստիարակության ու համախմբման կենտրոնը: Վ. Ի. Լենինի ցուցումով ու ղեկավարությամբ «Պրավդան» սուր պայքար ծավալեց լիկվիդատորների ու մենշևիկների դեմ: Թերթը իր ուշադրության կենտրոնում էր պահում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրապնդման խնդիրը, փայլուն կերպով կատարելով կոլեկտիվ պրոպագանդիստի ու կոլեկտիվ կազմակերպչի իր պատմական դերը: Բանվորները մեծ օժանդակություն և աջակցություն էին ցույց տալիս իրենց սիրելի թերթին: Նրանք «Պրավդայի» «երկաթե ֆոնդն» էին ուղարկում բանվորական կոպեկներից կազմված նվիրատվությունները, որոնք Վ. Ի. Լենինը դիտում էր իբրև պարտիական անդամավճար:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ցարական կառավարությունը փակեց «Պրավդան», որը կրկին կյանքի կոչվեց 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո: Մարտի 5-ին, դարձյալ բանվորների օգնությամբ և ամենաակտիվ աջակցությամբ, լույս տեսավ նոր «Պրավդայի» առաջին համարը: Հոկտեմբերյան սոցիալիստա-

նան Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման ու իրականացման ժամանակաշրջանում «Պրավդան» վիրխարի դեր կատարեց մասսաների գաղափարական դաստիարակության և նրանց ռևոլյուցիոն գրոհի տանելու գործում: Զինված մարքս-լենինյան գաղափարներով, «Պրավդան» հետևողականորեն մերկացնում էր ժամանակավոր կառավարության հակաժողովրդական, ռեակցիոն հաղթականությունը, ջախջախիչ հարվածներ հասցնելով մենշևիկյան, էսեռական և բուրժուական մյուս պարտիաներին ու կոնտրռևոլյուցիոն խմբերին: Ինչպես 1912—1914 թթ., այնպես էլ 1917 թ. «Պրավդայի» գործունեությանը ուղղություն էին տալիս պարտիայի և պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի հոդվածները:

Նախահոկտեմբերյան «Պրավդան» զգալի տեղ է հատկացրել Ռուսաստանի ծայրամասերի բանվորական ռևոլյուցիոն շարժումների արտացոլմանն ու լուսաբանմանը: Այս տեսակետից ուշագրավ և արժեքավոր են նրա ելույթները Անդրկովկասի վերաբերյալ: Մեր պարտիայի կենտրոնական օրգանը իր էջերում պարբերաբար անդրադարձել է Անդրկովկասի պրոլետարիատի սոցիալ-տնտեսական վիճակին, լուսաբանել բանվորների գործադուլային ու հաղթական պայքարը: «Կովկասյան պրոլետարիատը», «Բաքվի գործադուլը և ազգային հարցը», «Բանվորական համերաշխություն» և այլ հոդվածներում «Պրավդան» պատկերել է Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ համերաշխությունը, մերկացրել ազգայնական պարտիաների բայբայիչ ու կոնտրռևոլյուցիոն գործունեությունը: «Փոքր Ասիան և հայկական հարցը», «Մարզարեի հետևորդների կայսրությունը», «Անհետացող Հայաստանը» և մի շարք այլ հոդվածներում ու հաղորդումներում բերբր մերկացրել է միջազգային իմպերիալիզմի գիվանագիտական խաղերը «հայկական հարցի» ստրնչությամբ: «Պրավդայի» առաջին հայ թղթակիցներից են Ս. Հովսեփյանը, Ա. Մռավյանը, Ս. Կասյանը և ուրիշներ:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո «Պրավդան» դարձյալ հզոր զենք էր Կոմունիստական պարտիայի ձեռքին՝ ինչպես հաղթացիական կոիվների և օտարերկրյա ինտերվենցիայի դեմ մղվող պայքարի, այնպես էլ երկրի տնտեսության վերականգնման տարիներին: Պայքարելով պարտիայի ու ժողովրդի թշնամիների դեմ, «Պրավդան» հսկայական դեր խաղաց Մեծ Հոկտեմբերի պատմական նվաճումների պաշտպանության, մեր Հայրենիքում սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում: Հատուկ ընդգծման են արժանի «Պրավդայի» ծառայությունները Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Իր մարտական ելույթներով նա վառ էր պահում սովետական բազմազգ ժողովրդի հայրենասիրական ոգին: «Պրավդան» ռազմանակատում և թիկունքում սովետական մարդկանց կատարած անօրինակ սխրագործությունների հերոսական տարեգրությունն է:

Առանձնապես մեծ է լենինյան «Պրավդայի» նշանակությունը այժմ, կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում:

«Պրավդան» մեր մեծ Հայրենիքի բազմալեզու մամուլի ավանգարդն ու դրոշակակիրն է, մամուլ, որն իր ամենօրյա լենինյան խոսքով մասսաների սեփականությունն է դարձնում Կոմունիստական պարտիայի նոր ծրագրի վեհ ու սրբազան սկզբունքները, աշխատավորներին պայքարի կոչում՝ հանուն ՍՄԿՊ XXII համագումարի պատմական որոշումների կենսագործման:

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

* * *

Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ այս տարվա ապրիլ ամսին նշվեց ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Ա. Ի. Գերցենի ծննդյան 150-ամյակը: 1825 թ. դեկաբրիստների ապստամբությունը Պետերբուրգում, բնդաճորքների որոտը Սենատի հրապարակում՝ խոր արձագանք գտան Գերցենի հոգում: Դեռևս Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին նա իր շուրջը համախմբեց ազատամիտ ու առաջադեմ հայացքներով տրամադրված երիտասարդներին, որոնց միավորում էր քաղաքական և փիլիսոփայական հրատապ հարցերի վերաբերյալ հայացքների ընդհանրությունը: 1834 թ. հուլիսին Գերցենը բանտարկվում է և մեկ տարի անց, «որպես ազատախոհ, հասարակության համար խիստ վտանգավոր անձ», աքսորվում:

1842—1846 թթ. Գերցենը գրում է իր առաջին խոշոր փիլիսոփայական աշխատությունները՝ «Դիլետանտիզմը գիտության մեջ» և «Նամակներ բնության ուսումնասիրության մասին»: Ձգված ժամանակի առաջավոր գաղափարներով, իր այս աշխատություններում նա հանդես է գալիս որպես համոզված մատերիալիստ: Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, Գերցենը որպես փիլիսոփա-մտածող «կարողացավ հասնել այնպիսի բարձրության, որ կանգնեց իր ժամանակի մեծագույն մտածողների հետ հավասար մակարդակի վրա..., ընդհուպ մոտեցավ դիալեկտիկական մատերիալիզմին և կանգ առավ պատմական մատերիալիզմի առաջ»:

1847 թ. Գերցենը բողեց Ռուսաստանը և մինչև իր կյանքի վերջը (1870) ապրեց Էմիգրացիայում, ուր ստեղծեց բազմաթիվ նոր աշխատություններ («Նամակներ Ֆրանսիայից և Իտալիայից», «Այն ափից», «Եղելություններ և խոհեր» և այլն): 1855 թ. Լոնդոնում նա սկսեց հրատարակել «Պոլյարնայա զվեզդա» ալմանախը, իսկ 1857 թ.՝ հռչակավոր «Կոլոկոլ» թերթը, որը դարձավ Ռուսաստանում ռևոլյուցիոն պայքարի ժամանակագրությունը, գյուղացիական շարժումների ու դեմոկրատական հասարակական մտքի վերելքի տարեգրությունը: Գերցենի «Կոլոկոլ»-ը,— գրել է Վ. Ի. Լենինը,— «սարի պես կանգնեց գյուղացիների ազատագրման համար»:

Ռուսաստանում ծավալվող իրադարձությունները Գերցենին վերջնականապես համոզեցին, որ ինչպես մյուս, այնպես էլ գյուղացիական հարցում ցարական իշխանության հետ չի կարելի կապել ոչ մի բարի հույս, որ ազատության հասնելու միակ հաստատուն ռևոլյուցիոն պայքարն է. «Լավ է գոհվել ռևոլյուցիայի հետ,— գրել է նա,— քան փրկություն որոնել ռեակցիայի անկելանոցում»: Նույնպիսի վճռականությամբ Գերցենը կանգնեց դեմոկրատիզմի կողմը ազգային հարցում: Նա իրավացիորեն դրտնում էր, որ ազգային ազատագրման ձգտող որևէ ժողովուրդ երբեք ազատություն ձեռք չի բերի, քանի դեռ վերջ չի տվել ազգային ստրկությանը իր սեփական երկրում:

Գերցենը խոշոր դեր է կատարել Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների հոգևոր կյանքում: Նրա հավատարիմ ու ազնիվ բարեկամներից է եղել նաև հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Գերցենը բարձր է գնահատել Նալբանդյանին, նրան անվանելով գերազանցագույն մարդ:

Գերցենի անունը մոտ ու հարազատ է սովետական մարդկանց, դեմոկրատիայի ու սոցիալիզմի կողմնակիցներին, ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությանը:

Թ. Ի.